

Հաստատված է <<ՀՀ Լոռու մարզի Վանաձորի

Ա. Խլղաթյանի անվան N 18 միջնակարգ

դպրոց>> ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի

31.08.2022թ.-ի N 2 նիստով

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ <<ՎԱՆԱԶՈՐԻ Ա. ԽԼՂԱԹՅԱՆԻ
ԱՆՎԱՆ N 18 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ_Ի
ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ**

2022-2023 ՈւՍԱՐԻ

Հաստատում եմ

Դպրոցի տնօրեն՝

Թ.Թադևոսյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Նախորդ՝ 2021-2022 ուստարվա համառոտ վերլուծություն
- 2022-2023 ուստարվա ժամանակացույց և աշխատաժամանակ
- Պարտադիր կրթության իրականացում
- Համընդհանուր ներառական կրթության իրականացում
- Ուսումնադաստիարակչական աշխատանքներ
- Աշխատանք մանկավարժական աշխատողների հետ
- Ներդպրոցական վերահսկողության համակարգ
- Աշխատանք աշակերտների և ծնողների հետ
- Ֆինանսատնտեսական գործունեություն
- Մանկավարժական խորհրդի նիստեր
- Հաստատության 2022-2023 ուստարվա միջոցառումների պլան
- Հաստատության 2022-2023 ուստարվա ուսումնական պլան, դասաբաշխում

2021-2022 ուստարվա համառոտ վերլուծություն

2021-2022 ուստարին սկսվել է սեպտեմբերի 1-ին, ավարտվել է հունիսի 3-ին՝ միահերթ, 5 օրյա աշխատանքային ռեժիմով: Առաջին կիսամյակը 1-ին դասարանցիների համար ներառել է 13 շաբաթ 3 օր, 2-12 –րդ դասարանցիների համար՝ 14 շաբաթ 3 օր: Երկրորդ կիսամյակը 1-ին դասարանցիների համար ներառել է 17 շաբաթ, 2-րդ դասարանցիների համար՝ 18, 3-12-րդ դասարանցիների համար 20 շաբաթ:

2021-2022 ուստարում դպրոցում գործել է 6 մեթոդախմբում, դասավանդել են 43 ուսուցիչներ, որոնցից 11-ը ունեն որակավորման 1-ին կարգի տարակարգ, 2-ը՝ 2-րդ կարգի տարակարգ: Հաստատությունում մանկավարժահոգեբանական աջակցման ծառայություններ են մատուցել 1 լոգոպեդ, 1 սոցիալական օգնական, 1 հոգեբան, 5 ուսուցչի օգնական, ՎՏՄԱԿ-ի աշխատակիցները ևս՝ ըստ հաստատված կարգացուցակի:

Հաստատությունում 2021-2022 ուստարում ուսումնադաստիարակչական / այդ թվում մանկավարժահոգեբանական աջակցման ծառայությունների մատուցումը/ աշխատանքները իրականացվել են հետևյալ 6 բաժիններով՝

Պարտադիր կրթության կենսագործում

Աշխատանք մանկավարժական աշխատողների հետ

Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում

Ներդպրոցական վերահսկողություն

Աշխատանք աշակերտների և ծնողների հետ

Ֆինանսատնտեսական գործունեություն և ուսումնական բազայի ամրապնդում

Ուստարվա սկզբում կոմպլեկտավորվել է 25 դասարան՝ 672 աշակերտով, որից 24-ը՝ ԿԱՊԿՈՒ. 2-րդ կիսամյակի սկզբում աշակերտների թիվը՝ 667, որից 24-ը՝ ԿԱՊԿՈՒ: Ուստարվա ընթացքում դպրոցից տեղափոխվել է 20 աշակերտ, դպրոց եկել՝ 11 աշակերտ: Ուստարվա ավարտին աշակերտների թիվը 663 է (331 տղա և 332 աղջիկ), որից 24-ը՝ ԿԱՊԿՈՒ: Ըստ սահմանված կարգի հաստատվել, մշակվել, վարվել է հաստատության 2021-2022 ուստարվա 24 ԿԱՊԿՈՒ աշակերտների ԱՌԻՊ- ները: 2-րդ կիսամյակում շարունակվել է հեռավար դասընթացը 3 ԿԱՊԿՈՒ աշակերտի հետ: 24 ԿԱՊԿՈՒ աշակերտների փոխադրումը հաջորդ դասարան կատարվել է ԱՌԻՊ-ներով իրականացված գնահատման հիման վրա:

Դպրոցի 663 աշակերտներից 81-ը գերազանց առաջադիմությամբ սովորողներն են, 162-ը՝ հարվածային, 1 աշակերտ չի առաջադիմել, 2 աշակերտ չեն գնահատվել:

Պետական ավարտական քննությունների հանձնման արդյունքում 12^ա դասարանի 2 աշակերտ չեն պահպանել իրենց գերազանց առաջադիմությունը:

Այսպիսով 2021-2022 ուստարում գերազանց առաջադիմությամբ աշակերտները 81-ն են:

2021-2022 ուստարվա ամփոփման արդյունքում դպրոցի առաջադիմությունը 99,55% է, որակական առաջադիմությունը ` 36,65 %. չեն առաջադիմել ` 0,45 %-ը:

- 2 աշակերտ պարտուսից դուրս են մնացել 200ժ -ից ավելի բացակայություններ ունենալու պատճառով, ըստ սահմանված կարգի նրանք կրկնելու են դասընթացը.

Ասլանյան Անի ` 4^F դասարան-766ժ

Ասլանյան Ինա ` 2^F դասարան- 736 ժ:

- 1 աշակերտ (Ղազարյան Արարատ ` 10^ա դասարան) չի առաջադիմել կեսաբանությունից: Կազմվել է ամառային առաջադրանքների և խորհրդատվությունների ժամանակացույց , ըստ որի ուսուցչի հետ Ա. Ղազարյանը պատրաստվել է համապատասխան առարկայից օգոստոսի վերաքննությանը / ստացել է 5 միավոր և փոխադրվել 11-րդ դասարան/:

2021-2022 ուստարվա ընթացքում հաստատությունում 120-200 ժամ բացակայություն ուներ 6 աշակերտ .

9^ա - Բուլղաղարյան Սերյոժա -129 ժամ

8^ա - Բիլյան Քրիստինե - 150ժամ (I կիսամյակ)

8^F – Կիրակոսյան Սիրանուշ – 168 ժամ

8^F – Վարդումյան Արթուր – 121ժամ

6^ա – Պողոսյան Վիկտորիա 135 ժամ

Ս/թ մայիսի 30-ից մինչև հունիսի 3-ը կազմակերպվել է 120ժ-200ժ բացակայած սովորողների քննական և ստուգողական աշխատանքների հանձնումը:

Նախատեսված քննություններից և ամփոփիչ ստուգողական աշխատանքներից (10 միավորային համակարգում) 6 աշակերտն էլ ստացել են դրական գնահատական , ձևավորել են կիսամյակային և տարեկան գնահատականներ :

Հաստատությունում 2021-2022 ուստարում գիտելիքների ստուգում, ավարտական, կենտրոնացված ավարտական, պետական ավարտական քննություններ հանձնել են 4-րդ, 9-րդ, 12-րդ դասարանների աշակերտները:

12-րդ դասարանի 41 աշակերտից քննություն է հանձնել 40-ը / 1 ԿԱՊԿՈՒ՝ ազատված ծնողի դիմումի համաձայն/։ 12-րդ դասարանի աշակերտների համար պետական ավարտական քննությունները կազմակերպվել են 2 քննաշրջանում/ հունվարի և հունիսյան/։

1-ին փուլ՝ հունվար - 12.01.2022թ Շայոց պատմություն- 20 աշակերտ

Որակ. առաջ.՝ 55%

14.01.2022թ Մաթեմատիկա - 17 աշակերտ

Որակ առաջ՝ 18 %

2-րդ փուլ՝ հունիս - 8 .06.2022թ Շայոց լեզու և հայ գրականություն / 28աշ./ -

Որակ. Առաջ.՝ 28,6%

15.06.2022թ Շայոց պատմություն / 16 աշ./

Որակ. Առաջ.՝ 0%

22.06.2022թ Մաթեմատիկա /13 աշ./

Որակ. Առաջ.՝ 23%

6.06.2022թ Ֆիզկուլտուրա առարկայից 12-րդ դասարանի աշակերտները հանձնել են նորմատիվներ՝ ցուցաբերելով դրական արդյունք :

12-րդ դասարանի աշակերտներից միասնական քննություն են հանձնել հետևյալ առարկաներից՝

Շայոց լեզու-12 աշակերտ

Մաթեմատիկա-10 աշակերտ

Շայոց պատմություն – 3 աշակերտ

2021-22 ուստարվա 12-րդ դասարանի թվով 4 սովորողներ հայոց լեզվի և մաթեմատիկայի միասնական քննություններից ստացել են անբավարար գնահատականներ.

1.Ենոքյան Սերյան- մաթեմատիկայից

2. Հարությունյան Գագիկ- մաթեմատիկայից և հայոց լեզվից

3. Մնացականյան Վարդուհի- մաթեմատիկայից

4. Փարսադանյան Մերի – մաթեմատիկայից

Վերոնշյալ աշակերտները, ըստ ԳԹԿ-ի համակարգչային և վերլուծական աշխ. բաժնի մշակած պաշտոնական տեղեկանքի, ապահովել են ավարտական քննությունների դրական գնահատականները:

9-րդ դասարանի թվով 49 սովորողներից քննություններին մասնակցել են 44-ը / 5 ԿԱՊԿՈՒ աշակերտ ազատված ՝ ծնողի դիմումի համաձայն /

9-րդ դասարանի աշակերտները ավարտական, կենտրոնացված ավարտական քննություններ են հանձնել հետևյալ առարկաներից ՝

7.06.2022 Ֆիզկուլտուրա / նորմատիվների հանձնում /

9^ա - 21 աշակերտ ՝ որակ.առաջ.՝ 95%, 9^բ - 23 աշակերտ որակ.առաջ.՝ 100%

8.06.2022թ Հայոց պատմություն / բանավոր /

9^ա 20 աշակերտ ՝ որակ. առաջ.՝ 55%

1 աշակերտ /Պետրոսյան Հեղինե Հովհաննեսի/ վիրահատության պատճառով բացակայել է, սահմանված կարգով վերաքննություն է հանձնել 4.07.2022թ ՝ ստանալով բավարար գնահատական:

9.06.2022թ Հայոց պատմություն / բանավոր /

9^բ 23 աշակերտ ՝ որակ. առաջ.՝ 78%

13.06.2022թ Գրականություն / բանավոր /

9^ա 21 աշակերտ ՝ որակ.վառաջ.՝ 43%

9^բ - 23 աշակերտ ՝ որակ.առաջ.՝ 65%

16.06.2022թ Օտար լեզու / բանավոր /

Անգլերեն -23 աշակերտ ՝ որակ. առաջ.՝ 87%,

ռուսաց լ.- 21աշակերտ ՝ որակ. առաջ.՝ 33%/

1 աշակերտ /Աղամայյան Գոռ Սամվելի/ հիվանդության պատճառով բացակայել է ռուսաց լեզվի քննությունից. սահմանված կարգով վերաքննություն է հանձնել 4.07.2022թ` ստանալով բավարար գնահատական:

23.06.2022թ` Բնագիտություն

Ֆիզիկա /-6 աշակերտ` որակ.առաջ.` 83%

Աշխարհագրություն-15 աշակերտ` որակ. առաջ.` 40%

Կենսաբանություն-23 աշակերտ` որակ. առաջ.` 57% աշակերտ

28.06.2022թ` Հայոց լեզու / կենտրոնացված ,գրավոր, թեստ /

Որակ. առաջ.` 54.5%

30.06.2022թ` Մաթեմատիկա / կենտրոնացված ,գրավոր

Որակ. առաջ.` 27.3%

4-րդ դասարանի 61 սովորողներից գիտելիքների ստուգմանը մասնակցել են 57-ը, որից 3-ը` ԿԱՊԿՈՒ /ազատված ծնողի դիմումի համաձայն/, 1-ը` կրկնելու է դասնթացը:

10.06.2022թ` Մայրենի /գրավոր, թեստ/ 57-աշակերտ

13.06.2022թ` Մաթեմատիկա /գրավոր, թեստ/ 57-աշակերտ

Ստորև 4-րդ դասարանների սովորողների գիտելիքների ստուգումից ցուցաբերած առաջադիմության որակական արդյունքները.

Դասվար	Մայրենի 10.06.2022	Մաթեմատիկա 13.06.2022
4Ա Ա.Մելիքսեթյան	76 %	76 %
4Բ Ն.Դանիելյան	78 %	75 %

Հաստատության 2021-2022 ուստարվա 9-րդ դասարանների 49 սովորողները ստացել են հիմնական կրթության վկայականներ և 12-րդ դասարանների 41 սովորողները՝ միջնակարգ կրթության ատեստատներ: 4-րդ դասարանների 61 սովորողները ստացել են տարրական կրթության հավաստագրեր՝ փոխադրվելով 5-րդ դասարաններ:

2021-2022 ուստարում տնօրենության կողմից կազմակերպվել են բազմաբնույթ դասալսումներ, պարբերաբար տրվել են թեմատիկ, հայտորոշիչ գրավորներ, իրականացվել է ֆրոնտալ վերահսկողություն .

տարրական դասարաններում / 2-4 / /կցվում են գրավորների արդյունքները/,

մարտ-մայիս՝ տնօրենության կողմից թեմատիկ, հայտորոշիչ գրավոր աշխատանքներ են տրվել բնագիտական առարկաներից և մաթեմատիկայից / կատարվել է խորքային վերլուծություն, առաջարկվել լուծումներ՝ որակին միտված/,

9 դասարաններում՝ հայոց լեզվից և մաթեմատիկայից. գնահատելու կենտրոնացված քննություններին պատրաստված լինելու աստիճանը և մինչև քննությունները շտկելու թերությունները / կցվում է գրավորների արդյունքները/,

հայոց լեզվից տրվել է թելադրություն բոլոր դասարաններում,

իրականացվել է կարդալու տեխնիկայի /1-ից 3-րդ դասարաններում/ և բազմապատկման աղյուսակի իմացության /2-րդ դասարան/ ստուգում:

2021-22 ուստարում հաստատության սովորողները ակտիվորեն մասնակցել են առարկայական օլիմպիադաների, մրցույթների դպրոցական, տարածքային , մարզային, նաև՝ հանրապետական փուլերին:

ՆԶՊ - ուսուցիչ Գ. Կոստանյան

2 հաղթող՝ 1-ը հանապետական փուլի, մյուսը՝ մարզային

11-րդ դասարանի աշակերտներ Գ. Զալինյանը և Հ. Ասրյանը՝ ՆԶՊ-ի առարկայական օլիմպիադայի տարածքային, մարզային փուլերում դրսևորել են գերազանց արդյունք, ճանաչվել հաղթող: Հանրապետական փուլին մասնակցել է միայն Գ. Զալինյանը / Հ.Ասրյանը հիվանդության պատճառով չի մասնակցել/ և արժանացել 3- րդ կարգի դիպլոմի, մեդալի և կրթաթոշակի:

Մաթեմատիկայից դպրոցական առարկայական օլիմպիադայի տարածքային փուլին մասնակցել են 3 աշակերտ, սակայն արդյունքները բավարար չեն եղել մարզային փուլին մասնակցելու համար:

Անգլերեն

Անուն/ ազգանուն	Դասարան	Տարածքային փուլ	Մարզային փուլ
Միլենա Ասրյան	12	18	6.8
Գևորգյան Արաքսյա	11	18.7	6
Աֆրկյան Սյուզաննա	10	16.7	10.55
Պետրոսյան Նինա	10	17.5	9.9

Ռուսաց լեզու

Էլեն Թովմասյան	9	40/40	40/31
----------------	---	-------	-------

Հայոց լեզու
Անցողիկ միավոր՝ 12 և ավելի

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դասարան	Ստացած գնահատականը		
			Դպրոցական փուլ 11.01.2022թ	Մարզային փուլ 01.02.2022թ	Հանրապետական փուլ
1	Բեգջանյան Լուսինե Արմենի	12	-		
2	Գևորգյան Արաքսյա Սևակի	11	13,65	12,2	
3	Պողոսյան Սեդա Արթուրի	11	10,45		
4	Պետրոսյան Նինա Արմենի	10	5,8		

Անցողիկ միավոր՝ 12 և ավելի

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դասարան	Ստացած գնահատականը		
			Դպրոցական փուլ	Մարզային փուլ	Հանրապետական փուլ
1	Հակոբյան Սպարտակ Մովսեսի	9	10.4		
2	Մաթևոսյան Մարինա Գնելի	9	-		

Գրականություն

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դասարան	Ստացած գնահատականը		
			Դպրոցական փուլ	Մարզային փուլ	Հանրապետական փուլ
1	Սաֆարյան Շողիկ Արենի	9	6,7		
2	Հակոբյան Սպարտակ Մովսեսի	9	6,2		

Պատմություն

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դասարան	Ստացած գնահատականը		
			Դպրոցական փուլ 12.01.2022	Մարզային փուլ	Հանրապետական փուլ
1	Հակոբյան Սպարտակ Մովսեսի	9	9,5		
2	Մարգարյան Հասմիկ Արթուրի	9	9		
3	Բեգզանյան Լուսինե Արմենի	12	-		

ՎՊՄՀ-ում կազմակերպված օլիմպիադայի մասնակիցները և արդյունքները՝

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Դասարան	Առարկա
1	Շահվերդյան Մարիաննա Վահեի	11	Գրականություն
2	Գևորգյան Արաքսյա Սևակի	11	Հայոց լեզու
3	Պողոսյան Սեդա Արթուրի	11	Հայոց լեզու
4	Եղիկյան Օֆելյա Արամի	11	Հայոց լեզու

Զորյանի տուն-թանգարանում մեր աշակերտները մասնակցել են << Պապ թագավորը>> պատմավեպի խորագիրը կրող օլիմպիադային /ուս. Ե. Գալստյան, Լ. Սուլյան/:

7-11-րդ դասարանի աշակերտները մասնակցել են << Լոռի- Փամբակ պատմամշակութային ժառանգություն >> օլիմպիադային՝ հավաքելով 99 միավոր 100ից /ուս. Հ. Խառատյան /

Դպրոցի ՆԶՊ-ի թիմը մասնակցել է „ Дню защитника Отечества>> ռազմասպորտային մրցույթին՝ գրավելով 3-րդ պատվավոր տեղը, իսկ թիմի անդամ Գ. Զալինյանը անհատական ցուցանիշով գրավել է առաջին պատվավոր տեղը և պարգևատրվել հուշանվերով:

Դպրոցի աշակերտները մասնակցել են <<Մեղու>> հայերենը բոլորի համար և <<Կենգուրու>> մաթեմատիկական մրցույթներին՝ արժանանալով << Լավագույն արդյունք>> մրցանակի՝

Կոստանյան Արփինե 3^ա դասարան - 91 միավոր - <<Կենգուրու>>

Արեգ Հարությունյանը 4^ա դասարան - 96 միավոր - <<Կենգուրու>>՝

Զավախյան Բորիս 4^ա դասարան - 92 միավոր - <<Կենգուրու>>

Մաթևոսյան Մարինա 9^բ դասարան 111 միավոր - <<Մեղու>>

9-ից 12-րդ դասարանների աշակերտները մասնակցել են Մարզ IQ մրցույթին. 1-ին փուլում 12-րդ դասարանի սան Զոհրանյան Գագիկը, 11-րդ դասարանի սովորող Ազիզյան Գոռը գրավեցին 2-րդ տեղը, Գաբրիելյան Արսենը՝ 3-րդ.

2-րդ փուլում 9 ա դասարանի սան Պետրոսյան Հեղինեն գրադեցրել է 1-ին հորիզոնականը, Գոռ Ազիզյանը (11ա)՝ երրորդ տեղը, Արսեն Գաբրիելյանը (10բ դասարան)՝ երկրորդ տեղը, Գագիկ Զոհրանյանը (12բ)՝ երկրորդ տեղը:

«Մարգալետի գավաթ» ֆուտզալի մարզային առաջնությունում առաջին հորիզոնականն է զբաղեցրել 18 միջնակարգ դպրոցի թիմը:

ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԱՀ-ն հանրակրթական դպրոցների 1-ից 3-րդ դասարանների միջև Սպորտլանդիա 2022,, մարզական միջոցառման տարածքային փուլում մեր սաները գրավել են 3-րդ տեղը և ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից արժանացել հավաստագրի:

ՆԶՊ առարկայի կրակային մրցումներում Լոռու մարզում հաղթող է ճանաչվել 10^ա դասարանի աշակերտուհի Օֆելյա Խլղայանը

Դպրոցի երգչախումբը մասնակցել է մարզապարանի կողմից կազմակերպված մանկապատանեկան հայ երգի փառատոնին (ղեկավար՝ Լ. Չարյան):

Փառատոնին մասնակցել և հաղթել են նաև Սյուզաննա Սաֆարյանը /12-րդ դաս./ և Արմինե Իսահակյանը /7-րդ դաս./՝ որպես անհատ կատարողներ:

Երաժշտության ուսուցչուհի Լ. Չարյանի ղեկավարությամբ Սյուզաննա Սաֆարյանը մասնակցել է ՎՊՄՀ -ում կազմակերպված երգի օլիմպիադայի մարզային փուլին՝ գրավելով 1-ին տեղը:

Դպրոցում տեխնոլոգիայի ուսուցիչներ Ե. Աշուղյանը և Ա. Պողոսյանը կազմակերպել են „Հմուտ ձեռքեր,, խորագրով ցուցահանդեսը:

Շախմատի մրցույթին լավագույնս ներկայացել են և պարգևատրվել պատվոգրերով հետևյալ աշակերտները.

Բարխուդարյան Սուսաննա՝ 4-րդ Ա դասարան,
Թամարյան Արշակ՝ 4-րդ Բ դասարան,
Պետրոսյան Աշխեն՝ 2-րդ դաս.:

“ Живая классика” ասմունքի մրցույթի դպրոցական փուլի հաղթողները ներկայացվել են մարզային փուլին՝

1. Հրանտ Վարդանյան / 4Բ /
2. Էլեն Թովմասյան / 9Բ /

**Փորձարարական, բաց դասեր, միջոցառումներ,
վերապատրաստման դասընթացներ**

Համակցված դաս 10բ և 3-րդ բ դասարանների մասնակցությամբ /ուսուցիչներ՝ Ա.Վարդազարյան, Եվ. Պետրոսյան/

Փորձարարական դաս՝ Weather and Seasons՝ 6Ա դաս.

/ուսուցիչ՝ Ա. Պապյան /

Fashion / Dress to Impress / 10բ. դաս, ուս.՝ Ա. Պապյան/

TAGs/ Ուսուցիչների աշխատանքային խմբերի համակարգում /Բրիտանական խորհուրդ, հուվար- մայիս,Ա. Պապյան/

OTC - Ուսուցիչների առցանց համայնք ծրագրի վերապատրաստող / Բրիտանական խորհուրդ, Լոռու և Արագածստնի մարզ,հոկտեմբեր- ապրիլ, Ա. Պապյան /
BGATE- Հայ-վրացական-արխագական առցանց համագործակցություն ,
մասնագիտական վերապատրաստման դասընթաց/ հոկտեմբեր-մայիս,2022,Ա.
Պապյան /

Современные методы преподавания русского языка как иностранного
/Մոսկվայի պետական մանկավարժական համալսարան, Ա.Վարդազարյան/

Ա. Վարդազարյանը և Եվ. Պետրոսյանը փորձի փոխանակման նպատակով այցելել են Վանաձորի N24 դպրոցում կազմակերպված բաց դասին “Творчество Булата Окуджавы” այնուհետև մասնակցել “ Основные трудности изучения русского языка в армянской школе”.

“Фестиваль русского языка и русской культуры”

/ Ա. Վարդազարյան, Եվ. Պետրոսյան/

Դպրոցական փուլի արդյունքում 4 աշակերտ հնարավորություն են ստացել մասնակցելու քաղաքային փուլին հետևյալ անվանակարգերում՝

“Լավագույն շարադրություն”

“Լավագույն բանաստեղծություն Հայաստանի մասին ռուսերեն լեզվով

“ Ռուսական ժողովրդական պար”

Թումանյանական օրերին(փետրվար) Հովհ. Թումանյանի <<Գիքորը>> պատմվածքի բեմականացում՝ դաս- միջոցառում (6-րդ Բ դաս, ուս. Ա. Մարգարյան

<<Հայաստանի գույները>> բաց դաս 6-րդ Ա դասարանում, ուս. Գ. Թումանյան

<<Հայերենի խոսքի մասերը>> բաց դաս հայոց լեզվից

/7-րդ Ա դասարանում, ուս. Լ. Սուլյան/

Համադպրոցական միջոցառում նվիրված Զատիկի տոնին, ուս. Հ. Խառատյան

Խաչքարի բացում Առաջնորդարանում (7-րդ Բ դաս., ուս. Հ. Խառատյան)

„Հայաստանն իմ հայրենիքն է,, թեմայով բաց դաս „Ես և շրջակա աշխարհը,, առարկայից /4-րդ դասարանի դասվար Ա. Մելիքսեթյան/

4-րդ դասարանների դասվարներ Ա. Մելիքսեթյանը և Ն. Դանիելյանը՝ ավարտական միջոցառումներ

Ես քո զավակն եմ Հայաստան՝ միջոցառում /3-րդ Բ դասարանի դասվար Ե. Սարգսյան/

Հունիսի 1- մանուկների իրավունքների պաշտպանության օրվան նվիրված միջոցառում /3-րդ Ա դասարանի դասվար Է.Ղուլաշյան/

Այբբենարանի հանդեսներ / 1-ին դասարանների դասվարներ Գ. Գևորգյան և Մ. Ղազարյան/

Ինտելեկտուալ խաղ մրցույթ աշխ.-ից / ուս.՝ Խառատյան Արմինե /
Ավստրալիա - փորձարարական դաս(6ա դաս., ուս.՝ Խառատյան Արմինե)
«Աշխարհագրությունն ամենուր է»-նախագծային աշխատանք (9բ ուս.՝
Խառատյան Արմինե)
Կլիմայական արկղիկ- վերապատրաստում / ուս.՝ Խառատյան Արմինե /

«Դասագրքաստեղծման աշխատանքներում ուսուցիչների մասնակցություն» / ուս.՝ Ավոյան Տաթև, Խառատյան Արմինե

«Միջառարկայական կապերի դերն ու նշանակությունը ֆիզիկայի դասավանդման գործընթացում» հոդված («Մանկավարժական միտք» ամսագիր) ուս.՝ Տ.Ավոյան , Գ. Վարդանյան

Գործնական և լաբորատոր փորձեր - ուսուցիչ Մ. Գասպարյան

- Չհազեցած, հազեցած, գերհազեցած լուծույթների պատրաստումը NaCl –ից, CuSO_4 -ից
- Քիմիական լուսակիր՝ փորձեր կալիումի պերմանգանատի, նատրիումի հիդրօքսիդի , շաքարավազի օգտագործմամբ
- Պղնձարջասպի և նատրիումի հիդրօքսիդի փոխազդեցությունը
- Փրփուրի ստացումը ջրածնի պերօքսիդից օգտագործելով կալիումի պերմանգանատ, հեղուկ օձառ և ջրածնի պերօքսիդ
- Կալցիումի գլյուկոնատի քայքայումը

Գործնական և լաբորատոր փորձեր - ուսուցիչ Լ. Հովհաննիսյան

- Ածխածնի ազոտրոպ ձևափոխություններ»(9աբ)

- «Օգոնն ջրածնի պերօքսիդ» (10աբ)
- «Քիմիական լուսակիր» կալիումի պերմանգանատի, նատրիումի հիդրօքսիդի, շաքարավազի օտագործմամբ (8բ)

Փորձարարական բաց դասեր – ուսուցիչ՝ Մ. Հանիսյան

Շնչառական օրգանների հիգիենան

(8բ)

Մարտոդական համակարգ (8ա

բ)

Մաշկի կառուցվածքը (8ա բ)

Ուսուցիչների ձեռքբերումներ

- Զինդեկ Գ. Կոստանյանը պարգևատրվել է **Շնորհակալագրով** ՀՀ ՊՆ նախարար Ս. Պապիկյանի կողմից՝ մարտական գործողություններին մասնակցելու և թիկունքային խնդիրներին աջակցություն ցուցաբերելու, երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում ներդրում ունենալու համար:
- Զինդեկ Գ. Կոստանյանը ՀՀ Լոռու մարզպետ Ա. Խաչատրյանի կողմից 2021-2022 ուստարվա դպրոցական առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին մրցանակակիր աշակերտներ պատրաստելու համար արժանացել է **Պատվոգրի**:
- Զինդեկ Գ. Կոստանյանը Սպարտակիադայի Հրաձգություն մարզաձևի մրցաշարում հաղթող մասնակից ունենալու և հանրապետական փուլ անցնելու համար, արժանացել է **Շնորհակալագրի** դպրոցի տնօրեն Թ. Թադևոսյանի կողմից:
- Զինդեկ Գ. Կոստանյանը ՆՁՊ առարկայական օլիմպիադայի և մարզային, և հանրապետական փուլերում հաղթող մասնակից ունենալու համար արժանացել է դրամական պարգևատրության դպրոցի տնօրեն Թ. Թադևոսյանի կողմից:
- Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու, 6 Բ դասարանի հետ Հ.Թումանյանի <<Գիքոր >>պատմվածքը գերազանց բեմականացնելու համար, հաստատության հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ա. Մարգարյանը արժանացել է **Շնորհակալագրի** դպրոցի տնօրեն Թ. Թադևոսյանի կողմից:
- Շախմատի ակումբային թիմային 2-րդ փուլում 1-ին տեղը գրավելու համար Հայաստանի շախմատի ակադեմիայի կողմից **դիպլոմ** է ստացել շախմատի ուսուցիչ Արթուր Վարդևանյանը:
- „Այբ,, կրթական հիմնադրամի կողմից **Շնորհակալագրի** է արժանացել Անուշ Հմայակյանը՝ մրցույթը պատշաճ մակարդակով կազմակերպելու և անցկացնելու համար:

- Դպրոցում ուսուցիչների միջև կազմակերպված կրակային մրցումների առաջին 3 տեղերը զբաղեցրած աշխ.-ը՝ ՈԻԱ փոխտնօրեն Մ. Գասպարյանը, հայոց լ.-ի ուս. Ա. Գրիգորյանը, լաբորանտ Կ. Կարինյանը **Պատվոգրերի** արժանացան զինղեկի և տնօրենի կողմից
- ԿԶՆԱԿ - ի կողմից „Տնօրենների և փոխտնօրենների 30 ժամյա դասընթաց, - ի **վկայական են** ստացել տնօրեն Թ. Թադևոսյանը և ՄԿԱ փոխտնօրեն Լ.Խլղաթյանը
- Հունիսի 9-24-ը դպրոցում գործող Ամառային ճամբարի ողջ թիմը պարգևատրվել է տնօրենի **Շնորհակալագրերով**

2022 թ.-ի հաստատության հերթական վերապատրաստման և ատեստավորման ենթակա ուսուցիչները ընտրել են իրենց նախատեսագիտն վերապատրաստող կազմակերպությունները, այդ մասին գրավոր դիմել տնօրենին: Ներքոհիշյալ ուսուցիչները վերապատրաստվել են և մինչև 2022թ. վերջը կատեստավորվեն.

- 1.Ղազարյան Մանե-դասվար
- 2.Մարգարյան Արուսյակ- հայոց լ. և գրակ
- 3.Մարգարյան Ելենա-դասվար
- 4.Թումանյան Գոհար- հայոց լ. և գրակ
- 5.Պապյան Անուշ-անգլերեն
- 6.Վարդազարյան Անետա-ռուսերեն
- 7.Կոստանյան Գևորգ-ՆԶՊ
- 8.Խառատյան Արմինե-աշխարհագրություն
- 9.Սաֆարյան Արկադի-ֆիզկուլտուրա
- 10.Հովհաննիսյան Լուսինե
- 11.Ղարիբյան Ռոբերտ-կերպարվեստ /հիվանդ. պատճառով կիսատ է թողել կուրսը/
- 12.Պողոսյան Մհեր-ֆիզկուլտուրա
- 13.Ավոյան Տաթևիկ-ֆիզիկա

2022-2023 ուսումնական տարվա

Ժամանակացույցը և աշխատաժամանակը

- 1) Ուսումնական պարապմունքները դպրոցում սկսվում են 2022թ. սեպտեմբերի 1-ին, ավարտվում 2023 թ. մայիսի 26-ին՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ առաջին, 32՝ երկրորդ և 34՝ երրորդից տասներկուերորդ դասարանների համար:
- 2) 2022-2023 ուսումնական տարում **3-12-րդ դասարանների** սովորողներին տրվում են արձակուրդներ՝ աշնանային՝ 2022թ. հոկտեմբերի 24-ից 30-ը ներառյալ, ձմեռային՝ 2022թ. դեկտեմբերի 26-ից 2023թ. հունվարի 8-ը ներառյալ, գարնանային՝ 2023թ. մարտի 27-ից ապրիլի 2-ը ներառյալ:
- 3) **Առաջին դասարանցիների** աշնանային արձակուրդները տրվում են 2022թ. հոկտեմբերի 17-ից 30-ը ներառյալ, ձմեռային՝ 2022թ. դեկտեմբերի 26-ից 2023թ. հունվարի 22-ը ներառյալ, գարնանային՝ 2023թ. մարտի 20-ից ապրիլի 2-ը ներառյալ:
Երկրորդ դասարանցիների աշնանային արձակուրդները տրվում են 2022թ. հոկտեմբերի 24-ից 30-ը ներառյալ, ձմեռային՝ 2022թ. դեկտեմբերի 26-ից 2023թ. հունվարի 22-ը ներառյալ, գարնանային՝ 2023թ. մարտի 27-ից 2-ը ներառյալ:
- 4) **Դպրոցում սահմանվում է 5-օրյա աշխատանքային շաբաթ:**
- 5) **Աշխատաժամանակի տևողությունը**

Տնօրեն, տնօրենի ՈւՄ գծով տեղակալ(1), տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ(1), զինղեկ ՔՊ հրահանգիչ (1,5), ԴԱԿ(1), ուսուցչի օգնական(5), լոգոպեդ(1), հոգեբան(1), սոցիալական օգնական(1), հաշվապահ(1), գործավար(1), գրադարանավար(1), ԷՀՄ օպերատոր(1) - **Ժամը 8:30- 16:30**

Տնտեսվար (1), դռնապան (1), հավաքարար(5), բանվոր(1)) - **Ժամը 8:00- 17:00, ընդմիջում՝ 12:00-13:00:**

Պահակ հերթափոխով (3)՝ շաբաթ և կիրակի օրերին ժամը 8.00 -8.00, երկուշաբթիից ուրբաթ ժամը՝ 17:00-8.00

2022-2023 ուստարի

Ուսուցիչների և մանկավարժական աշխատողների աշխատաժամանակը

Ազանուն, անուն	Առարկան	Ժամաք.	Դրույքաչափը	Աշխատաժամանակը
1. ԹադևոսյանԹագուհի			1տնօրեն	40 ժամ, օրական 8 ժամ, 8:30-16:30
2. ԳասպարյանՄելինե	Քիմիա	7	1փոխտնօրեն	40 ժամ, օրական 8 ժամ, 8:30-16:30
3. ԽլղաթյանԼուսինե	Անգլերեն	8	1փոխտնօրեն	40 ժամ, օրական 8 ժամ, 8:30-16:30
4. ԿոստանյանԳևորգ	ՆԶՊ	10	1գինդեկ,0.5ՔՊ	40 ժամ, օրական 8 ժամ, 8:30-16:30
5. ԽառատյանՀերմինե	ՀԵՊ, հայրենագիտություն	17	Դատել	30 ժամ, օրական 6 ժամ, 9:00-15:00
6. ԳրիգորյանԱրմինե	Հայոց լ. և գրականություն	24	Դատել	33 ժամ, օրական 6,6 ժամ, 9:00-15:40
7. ԹումանյանԳոհար	Հայոց լ. և գրականություն	22	Դատել	33ժամ, օրական 6,6 ժամ, 9:00-15:40
8. ՄարգարյանԱրուսյակ	Հայոցլ. ևգրականություն	22	Դատել +ՄՄ	33 ժամ, օրական 6,6 ժամ, 9:00-15:40
9. Սուլյան Լուսինե	Հայոցլ. ևգրականություն	22		31 ժամ, օրական 6.2 ժամ, 9:00-15:10
10. ՎարդագարյանԱնետա	Ռուսաց լեզու	22	Դատել+ՄՄ	33ժամ, օրական 6,6 ժամ, 9:00-15:40
11. ԿարախանյանԼիլիթ	Ռուսաց լեզու	22		31 ժամ, օրական 6.2 ժամ, 9:00-15:10
12. Ապրեսյան Ասյա	Ռուսաց լեզու	15		27ժամ, օրական 5,4 ժամ
13. Պողոսյան Նարե	Անգլերեն	23	Դատել	33 ժամ, օրական 6,6 ժ, 9:00-15:40
14. ՊապյանԱնուշ	Անգլերեն	22	Դատել	33 ժամ, օրական 6,6 ժամ,9:00-15:40
15. Ասրիյան Նելլի	Մաթեմատիկա	22	Դատել	33 ժամ, օրական 6,6 ժ, 9:00-15:40
16. ՎարդանյանԷլմիրա	Մաթեմատիկա	23	Դատել	33 ժամ, օրական 6,6 ժ, 9:00-15:40
17. ԽառատյանՍուսաննա	Մաթեմատիկա	23	Դատել+ՄՄ	33 ժամ, օրական 6,6 ժ, 9:00-15:40
18. Ավագյան Աննա	Մաթեմատիկա	22	Դատել	33 ժամ, օրական 6,6 ժ, 9:00-15:40
19. ՂևոնդյանԱնուշ ՖԱ Գրիգորյան Լուսինե /փոխար.	Ինֆորմատիկա	15		27 ժամ, օրական 5,4 ժամ
20. Ավոյան Տաթևիկ	Ֆիզիկա	22	Դատել	33 ժամ, օրական 6,6 ժ, 9:00-15:40
21. Եղիկյան Նունե	Ֆիզիկա, բնագիտ.	16		27 ժամ, օրական 5,4 ժամ
22. Հովհաննիսյան Լուսինե	Քիմիա	23	Դատել	33 ժամ, օրական 6,6 ժ, 9:00-15:40
23. Պողոսյան Արթուր	Տեխնոլոգիա	9	1 տնտեսվար	40 ժամ, օրական 8 ժամ, 8:30-16:30
24. ՎարդանյանԳայանե	Կենսաբ, բնագիտ.	19	Դատել	31 ժամ, օրական 6.2 ժամ, 9:00-15:10
25. Ղազարյան Քրիստինե	Կենսաբանություն	15		27 ժամ, օրական 5,4 ժամ
26. Խառատյան Արմինե	Աշխարհ.,բնագիտ.		Դատել+ՄՄ	33 ժամ, օրական 6,6 ժ, 9:00-15:40
27. ԱվետիքյանԳայանե	Պատմություն, հասարակագիտություն	25	Դատել	33 ժամ, օրական 6,6 ժ, 9:00-15:40
28. Գալստյան Ելենա	Պատմություն,	12		22 ժամ, օրական 4,4 ժամ
29. Մկրտչյան Անի	Պատմ., հասարակ.	24	Դատել	33 ժամ, օրական 6,6 ժ, 9:00-15:40
30. ԱշուղյանԵլենա	Տեխն., տն. ուսուցում	9+9	ՄՄ	33 ժամ, օրական 6,6 ժ, 9:00-15:40

31. Չարչյան Լիաննա	Երաժշտություն	15		27 ժամ, օրական 5,4 ժամ
32. Ղարիբյան Ռոբերտ	Կերպարվեստ	11		27 ժամ, օրական 5,4 ժամ
33. Վարդանյան Արթուր	Շախմատ	12		27 ժամ, օրական 5,4 ժամ
34. Պողոսյան Միկել	Ֆիզկուլտուրա	27		31 ժամ, օրական 6,2 ժամ
35. Սաֆարյան Արկադի	Ֆիզկուլտուրա	22		31 ժամ, օրական 6,2 ժամ
36. Մելիքսեթյան Աննա	Դասվար	18		31 ժամ, օրական 6,2 ժամ
37. Դանիելյան Նելլի	Դասվար	18		31 ժամ, օրական 6,2 ժամ
38. Գևորգյան Գոհար	Դասվար	18		31 ժամ, օրական 6,2 ժամ
39. Սարգսյան Ելենա	Դասվար	18	ՄՄ	33 ժամ, օրական 6,6 ժամ
40. Ղումաշյան Էռնանի	Դասվար	18		31 ժամ, օրական 6,2 ժամ
41. Բոշյան Անահիտ	Դասվար	18		31 ժամ, օրական 6,2 ժամ
42. Համբարձումյան Աննա	Դասվար	18		31 ժամ, օրական 6,2 ժամ
43. Ղազարյան Մանե	Դասվար	18		31 ժամ, օրական 6,2 ժամ
44. Ղումաշյան Սեդա	Լոգոպեդ		1	22 ժամ, օրական 4,4 ժամ, 8:30-16:30
45. Սպրիկյան Հայարիփի	Սոցմանկավարժ		1	40 ժամ, օրական 8 ժամ, 8:30-16:30
46. Հովհաննիսյան Մարիա	Հոգեբան		1	40 ժամ, օրական 8 ժամ, 8:30-16:30
47. Ղազարյան Վարդուհի	Ուս. օգնական		1	40 ժամ, օրական 8 ժամ, 8:30-16:30
48. Հարությունյան Կարինե	Ուս. օգնական		1	40 ժամ, օրական 8 ժամ, 8:30-16:30
49. Աթոյան Արմինե	Ուս. օգնական		1	40 ժամ, օրական 8 ժամ, 8:30-16:30
50. Քոչարյան Լիաննա	Ուս. օգնական		1	40 ժամ, օրական 8 ժամ, 8:30-16:30
51. Խանդամիրյան Այլա	Ուս. օգնական		1	40 ժամ, օրական 8 ժամ, 8:30-16:30
52. Անտոնյան Արևիկ	ԴԱԿ փոխարինող		1	40 ժամ, օրական 8 ժամ, 8:30-16:30
53. Մարաբյան Այլինա	Գրադարանավար		1	40 ժամ, օրական 8 ժամ, 8:30-16:30
54. Կարինյան Կարինե	Լաբորանտ		0,75	30 ժամ, օրական 6 ժամ, 8 : 30-14:30
55. Մեսրոպյան Նարինե	Լաբորանտ		0,75	30 ժամ, օրական 6 ժամ, 8 : 30-14:30
56. Ասլանյան Նարինե	Լաբորանտ		0,75	30 ժամ, օրական 6 ժամ, 8 : 30-14:30
57. Մարտիրոսյան Նանե	ՖԱ Ուս. օգնական			
58. Ղազարյան Լիլիթ	ՖԱ ԴԱԿ			

I ԲԱԺԻՆ

ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ

	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
1	2	3	4	5
1	Տնօրենին կից խորհրդակցություններ Օրակարգ՝ Նոր ուստարվա նախապատրաստական աշխատանքների բաժանում, Կազմակերպական հարցեր	25.08.2022- 01.09.2022թ.	Տնօրենություն	
2	Առաջին դասարանցիների ընդունելություն.հրամանագրել առցանց հայտագրված 6 տարին լր. երեխաներին: Աշակերտների նախնական կազմի հաստատում	Մինչև 31.09.2022	Տնօրեն, գործավար, օպերատոր	
3	Դասաբաշխում, դասարանների կոմպլեկտավորում, դասացուցակի կազմում և հաստատում	Մինչև 31.08.2022	Մանկխորհ, տնօրեն, տնօրենի ՈւԱ գծով տեղակալ	
4	Ներառական կրթության գործընթացի իրականացում	Ուստարվա ընթացքում	Տնօրինություն, ՎՏՄԱԿ, հոգեբան, սոցիալական և կրթական ուսուցչի օգնականներ	
5	Հաստատության տարեկան զարգացման ծրագրի, դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի, հաստատության 2022-2023 ուստարվա ուսպլանի, տնօրենի տեղակալների, ՄՄ նախագահների տարեկան աշխատանքային պլանների	Մինչև 31.08.2022	Մանկխորհ, կառավարման խորհուրդ, տնօրեն Տնօրեն, տնօրենի ՈւԱ գծով տեղակալ	

	հաստատում, առարկայական թեմատիկ պլանների ստուգում, հաստատում, տեղադրում կայքերում		Օպերատոր, ուսուցիչներ	
6	Ներքին կարգապահական կանոնների հաստատում	Թողնել նույնը	Մանկիտրի և կառավարման խորհուրդ	
7	Պարտուսի իրականացմանը մասնակից դարձնել ԾԽ-ին Խիստ վերահսկողության սահմանել ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ, ժամանակին դրանք կանխել Ուշադրության կենտրոնում պահել չառաջադիմող աշակերտներին Աշխատանք տանել դժվար դաստիարակվող երեխաների և նրանց ծնողների հետ	Ուստարում	Տնօրեն, փոխտնօրեններ դասղեկներ Փոխտնօրեններ Մանկ. համակազմ	
8	Համընդհանուր ներառում. Ոչ միայն ԿԱՊԿՈՒ, այլև սովորական ու հատկապես օժտված երեխաների հետ աշխատանքում	Ուստարում	Մանկավարժական համակազմ, տնօրենություն	
9	Սահմանված ժամանակացույցով դասագրքերի բաշխում՝ համաձայն ընդունված կարգի: Մոցիալապես անապահով երեխաների համար դասագրքերը զեղչով տրամադրելու գործընթացի կազմակերպում:	Օգոստոսի 25-31	Տնօրենություն Գրադարանավար	
10	Աշակերտների շարժի դիտարկում և հաշվետվության կազմում	15.09.2022թ.	Տնօրեն, գործավար, օպերատոր	2022-2023 ուստարվա սկզբում՝ 669 սովորող, որից 21-ը՝ ԿԱՊԿՈՒ /12 միջին+8 ծանր+1թեթև/

11	Տնօրենին կից խորհրդակցությունների անցկացում փոխտնօրենների, ՄՄ նախագահների, դասուցների հետ	Ուստարում	Տնօրեն Թ.Թադևոսյան	
12	Երկամսյակի արդյունքների ամփոփում: /հաճախակի բացակայող և չառաջադիմող աշակերտների ծնողներին գրավոր տեղեկացնել այդ մասին/	Յուրաքանչյուր երկամսյակ	ՄԿԱ փոխտնօրեն, դասուցներ	

4-րդ կետը՝ <<Ներառական կրթության գործընթացի իրականացում>>, մանրամասն ներկայացվում է ստորև

Աշխատանքային ծրագրերի կազմում

Կատարել նախնական դիտարկումներ՝ պարզելու, թե ինչպես են դրսևորում աշակերտներն իրենց դասապրոցեսին

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող /ԿԱՊԿՈԻ/ սովորողների բացահայտում

Պարբերաբար կատարել դասալսումներ՝ ուսումնասիրելով ԿԱՊԿՈԻ աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին, ինչպես նաև վարքային դրսևորումները Համագործակցել մանկավարժական կոլեկտիվի հետ՝ աշակերտների ուսումնական առաջադիմության մասին անհրաժեշտ տեղեկություններ հավաքելու նպատակով

Մասնակցել սովորողների անհատական ուսումնական պլանների (ԱՌԻՊ) մշակմանը և դրանց իրականացման աշխատանքներին՝ համագործակցելով մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող մանկավարժների և ծնողների հետ

Առանձին հանդիպումներ իրականացնել ծնողների հետ՝ երեխաների մասին ինֆորմացիայի ստացման և անհատական հոգեբանական աշխատանքը ճիշտ ուղղությամբ տանելու նպատակով

Մասնակցել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ծնողական ժողովներին

Ըստ հաստատության տնօրինության և ուսուցչի կողմից առաջադրված նպատակի՝ դասարանում իրականացնել սովորողի ուսումնառության խնդիրների ուղղությամբ դիտարկումներ, դրանց վերաբերյալ կատարել վերլուծություններ

ԿԱՊԿՈՒ աշակերտներին ներգրավել դպրոցում իրականացվող միջոցառումներին

Մասնակցել տարբեր հանդիպումների և վերապատրաստման դասընթացների: Փորձի փոխանակման նպատակով իրականացնել հանդիպումներ այլ ներառական կրթություն իրականացնող դպրոցների բազմամասնագիտական թիմերի անդամների հետ

Մշտական կապի պահպանում դասղեկների և այն մանկավարժների հետ, ովքեր դասավանդում են ԿԱՊԿՈՒ աշակերտներին՝ ապահովելով անընդհատ տեղեկատվության ստացման և համապատասխան մեթոդների կիրառումը

Ներառական կրթական համակարգում ընդգրկված երեխաների ավարտական և փոխադրման քննություններին և գիտելիքի ստուգմանը մասնակցություն

Մ եթողավորումների նիստերին և աշխատանքներին մասնակցություն

Ձեռք բերված համապատասխան մասնագիտական գրականության ուսումնասիրում և փորձի փոխանակում

Կատարված աշխատանքների արդյունքների ամփոփում, հաշվետվության կազմում

/ԲՄ թիմ, ուսուցչի օգնականներ/

II ԲԱԺԻՆ

Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում

h	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
1	2	3	4	5
	<p>Առարկայական մասնախմբերի ձևավորում՝ ուսումնական և մեթոդամանկավ. աշխ. արդյունավետ կազմակերպման նպատակով</p> <ol style="list-style-type: none"> 1. Հայոց լեզու և գրակ, պատմ., հասարակագիտություն, ՀԵՊ, հայրենագիտություն 2. Օտար լ./ռուսաց և անգլ./ 3. Մաթեմ. և ինֆորմ. 4. Բնագիտական /ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն/ 5. ՆԶՊ, շախմատ, ֆիզկուլտուրա, տեխնոլոգիա, կերպարվեստ, երաժշտություն 6. Տարրական-դասվարներ 	<p>Ուսումնական տարվա ընթացքում</p>	<ol style="list-style-type: none"> 1. Մարգարյան Ա. 2. Վարդազարյան Ա. 3. Խառատյան Ս. 4. Խառատյան Ա. 5. Աշուղյան Ե. 6. Մարգարյան Ե. 	
1	<p>Աշակերտներին դասագրքերով ապահովելու ուղղությամբ գործունեության կազմակերպում</p>	<p>1)Օգոստոս-սեպտեմբեր 2) Ուսումնական տարվա ընթացքում</p>	<p>Տնօրեն Թ.Թադևոսյան, գրադարանավար Ա. Մարաբյան, դասղեկներ</p>	
2	<p>Ուսուցման արդյունավետությունը էլ ավելի</p>	<p>Ուսումնականտա</p>	<p>• Տնօրեն՝ 30-50</p>	

	բարելավելու նպատակով կատարել դասալսումներ, արդյունքները քննարկել մասնախմբերի նիստերում, տնօրենին կից խորհրդակցություններում, մանկխորհրդի նիստերում: Կազմակերպել անհատական և խմբային փոխադարձ դասալսումներ	ընթացում	դասալսում	
3	Մասնախմբերի օգնությամբ ուսումնասիրել առարկաների դասավանդման որակը և արդյունքները քննարկել մասնախմբերի նիստերում, տնօրենին կից խորհրդակցություններում, մանկխորհրդի նիստերում	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն Թ.Թադևոսյան, փոխտնօրեններ, ՄՄ նախագահներ	
4	Ուսումնասիրել լաբորատոր գործնական աշխատանքների վիճակը ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության դասերին	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրենություն	
5	Անցկացնել դպրոցական օլիմպիադաներ	Ըստ ժամանակացույցի	Տնօրենություն	
6	Մասնակցել բոլոր արտադպ. օլիմպիադաներին			
7	Կիսամյակի ընթացքում առնվազն 1 անգամ հ.լեզու, մաթեմ., ռուսաց լ. առարկաներից կազմակերպել թեմատիկ ստուգումներ տնօրենության ներկայացուցչի կամ ՄՄ ղեկավարի մասնակցությամբ	Ուստարվա ընթացքում 2 անգամ	Տնօրեն, փոխտնօրեն, ՄՄ նախագահ	
8	Հետևել դասղեկի ժամի արդյունավետ անցկացմանը	Ամեն շաբաթ		
9	Ցուցաբերել մեթոդամանկավարժական օգնություն սկսնակ ուսուցիչներին	Ուսումնական տարվա ընթացքում	փոխտնօրեն, ՄՄ նախագահ	
10	Կազմակերպել դպրոցի ՄԿԱ գծով տեղակալի, դասղեկների, դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչի, հոգեբանի և	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն	

	սոցիալական մանկավարժի համագործակցված աշխատանքը			
11	Աշխատանք տանել բարձր դասարանի սովորողների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրենի տեղակալներ, ուսուցիչներ	
12	Կազմակերպված անցկացնել քննական առարկաների կոնսուլտացիաները և քննությունները	Դեկտ.-հունվար Մայիս -հունիս	Տնօրեն, տնօրենի տեղակալներ, հանձնաժողովներ, ուսուցիչներ	

III ԲԱԺԻՆ

Աշխատանք մանկավարժական աշխատողների հետ

h	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
1	2	3	4	5
1	Նշանակել դասղեկներ, մասնախմբերի ղեկավարներ	Մինչև 31.09.2022թ	Տնօրեն Թ.Թադևոսյան	
2	Անցկացնել մասնախմբերի ղեկավարների սեմինար խորհրդակցություն, նրանց ծանոթացնել մասնախմբերի կանոնադրությանը, որոշել հետագա անելիքները	Ուսումնական տարում	Տնօրենություն	
3	Պլանավորել մասնախմբերի գործունեությունը	Սեպտեմբեր-հոկտեմբեր, ուստարում	Տնօրեն, տնօրենի ՈւԱ գծով տեղակալ	
4	Ուսումնասիրել առաջավոր աշխատանքի փորձը և տարածել դպրոցում	Ուսումնական տարվա ընթացքում	ՄՄ նախագահներ, փոխտնօրեններ, տնօրեն	
5	Դասալսումների միջոցով մեթոդական օգնություն ցույց	Ուսումնական տարվա	Տնօրեն, տնօրենի տեղակալներ, ՄՄ	

	տալ մանկավարժներին	ընթացքում	նախագահներ, ուսուցիչներ	
6	Կազմակերպել ուսուցիչների պարտադիր վերապատրաստման և ատեստավորման գործընթացը	Ուսումնական տարվա ընթացքում	ԿԳՄՄՆ, վերապատրաստող կազմակերպություններ, դպրոց	
7	Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրենություն, մանկավարժական համակազմ	
8	Ուսուցիչներին ծանոթացնել ԿԳՄՄ նախարարության հրահանգներին , հրամաններին և այլ նորմատիվ փաստաթղթերի	Ուսումնական տարվա ընթացքում	Տնօրենություն, ՄՄ նախագահներ	
9	Պլանավորել մանկավարժական խորհրդի գործունեությունը	Ուստարվա ընթացքում	Տնօրեն Թ.Թադևոսյան	
10	Ուշադրության կենտրոնում պահել երիտասարդ և սկսնակ մանկավարժների հետ տարվող աշխատանքները	Ուստարվա ընթացքում	Տնօրեն, տնօրենի ՈւԱ գծով տեղակալ	

IV ԲԱԺԻՆ

Ներդպրոցական վերահսկողություն

Հանրակրթական ուսումնական հաստատության գործունեությունը իրականացվում է Աշխատանքային օրենսգրքի, Հանրակրթության մասին օրենքի և կարգերի հիման վրա: Այդ աշխատանքների կազմակերպումը վերահսկվում է ներդպրոցական վերահսկողության միջոցով:

Ներդպրոցական վերահսկողությունը հետադարձ կապ է, որն իրականացվում է կառավարման գործընթացում, ըստ անհրաժեշտության, և ամփոփում է մանկավարժական համակազմի գործունեության համապատասխանությունը պլանավորված աշխատանքի արդյունքներին:

Ժամանակակից հանրակրթական դպրոցին առաջադրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ վերահսկողությունը պետք է լինի **բազմանպատակ**, այսինքն՝ ուղղված տարբեր հարցերի ուսումնասիրմանը (ուսումնադաստիարակչական, մեթոդական, գիտահետազոտական և փորձարարական գործունեություն, դպրոցի ուսումնանյութական բազայի կատարելագործում, սանիտարահիգիենիկ պահանջների կատարում, անվտանգության կանոնների պահպանում և այլն), **բազմակողմանի**՝ միննույն ուղղության նկատմամբ վերահսկողության տարբեր ձևերի և մեթոդների կիրառում (ֆրոնտալ, թեմատիկ, ուսուցչի գործունեության անհատական վերահսկողությունն այլն), **բազմաստիճան**՝ միննույն ուղղության վերահսկողությունը վարչական մարմինների տարբեր մակարդակներով (ուսուցչի աշխատանքը հաստատությունում վերահսկում են տնօրենը, տնօրենի տեղակալները, մեթոդական միավորումների նախագահները, ԿՊԿԼՄ): Խոսելով վերահսկողության մասին՝ անհրաժեշտ է տարբերակել վերահսկողության տեսակները, ձևերը և մեթոդները:

Վերահսկողության տեսակը որոշակի նպատակով իրականացվող վերահսկողության ձևերի համակցումն է: Վերահսկողության ձևերի առանձնահատկությունները բնորոշվում են նրանց ուղղությունների և առաջադրված խնդիրների յուրահատկություններով, ինչպես նաև վերահսկողության համար օգտագործվող միջոցներով: Ուսումնական գործընթացում, ելնելով իրականացման նպատակներից, կարելի է առանձնացնել վերահսկողության երկու տեսակ՝ **թեմատիկ և ֆրոնտալ**: Թեմատիկ վերահսկողությունը իրականացվում է ողջ ուսումնական տարվա ընթացքում՝ համակողմանի ուսումնասիրման և կառավարման որակի մասին տեղեկություն ստանալու նպատակով: Թեմատիկ վերահսկողության արդյունքներով անցկացվում են հարցազրույցներ, խորհրդակցություններ, կատարվում են գրավոր արձանագրություններ:

